

Կ-1174-21.10.2025-SՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 58-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 58. 1-ին և 58. 2-րդ կետերով.

«58.1) 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ը ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողնումը կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարումը.

58.2) 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող և 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողնումը կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարումը. »:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 58-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 58. 1-ին և 58. 2-րդ կետերով. Կետով.

«58.1) 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի հունվարի 31-ը ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող և 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողնումը կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարումը. »:

58.2) 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող և 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային

ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բազթողումը կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարումը. »:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1174-21.10.2025-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Աժ պատգամավոր Լուսինե Բադալյան	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում եմ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 58. 1-ին կետում « ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60» ծածկագրերը փոխարինել « ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60» ծածկագրերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	Աժ պատգամավոր Լուսինե Բադալյան	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում եմ վերանայել տրանսպորտային միջոցի ներմուծման համար նախագծով սահմանվող 2 տարվա սահմանափակումը և այն կիրառելի դարձնել 5 տարեկանից բարձր թողարկման տարեթիվ ունեցող մեքենաների համար, քանի որ հակառակ պարագայում արտոնությունից կօգտվեն սոցիալապես ավելի ապահով խմբերը, մինչդեռ ԱԱՀ-ից ազատումը	Չի ընդունվել Էլեկտրական տրանսպորտային միջոցների թողարկման տարեթվի շեմի վերանայման հարցը համատեղ քննարկվել է մի շարք պետական մարմինների հետ / Շրջակա միջավայրի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Ֆինանսների	Չի ընդունվել

			նախատեսված է ապրանքները մատչելի դարձնել միջին և ավելի ցածր եկամուտ ունեցող խմբերի համար:	նախարարություններ և Պետական եկամուտների կոմիտե/ և ընդունելի չի համարվել, հաշվի առնելով մի շարք կարևոր դիտարկումներ, մասնավորապես՝ - հին էլեկտրամոբիլների մարտկոցները ունեն շահագործման կարճ ժամկետ, ինչի արդյունքում դրանք արագորեն շարքից դուրս են գալիս, - շահագործումից դուրս եկած մարտկոցների վերամշակումը կամ ոչնչացումը պահանջում է հատուկ տեխնոլոգիաներ և անվտանգության միջոցառումներ, - մարտկոցների կուտակումը կարող է առաջացնել լուրջ բնապահպանական և առողջապահական ռիսկեր, - ՀՀ-ում դեռևս առկա չեն էլեկտրական մեքենաների մարտկոցներից գոյացող էլեկտրոնային թափոնները վերամշակող կազմակերպություններ, - նշված առաջարկի ընդունումը կհանգեցնի	
--	--	--	---	---	--

				տրանսպորտային պարկի ծերացմանը, շահագործման մեջ գտնվող և լիթում-իոնային մարտկոցների կամ կուտակիչների արդեն իսկ խոտանման փուլում գտնվող էլեկտրոմոբիլների մեծ քանակով ներմուծմանը:	
2.	Աժ պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի հոդված 1-ին	Առաջարկում եմ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծման համար նախագծով սահմանվող 2 տարվա սահմանափակումը (2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված) տարածել 2026 թվականի փետրվարի 1-ից հետո Հայաստանի Հանրապետություն ներմուծված էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների վրա:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: